ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 77 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ու 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ և 2026 թվականի մարտի 12-ի թիվ 289-Ն որոշումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված պիլոտային կարգով հաշվարկած խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի 2-րդ կիսամյակի վերջին օրվա և վճարումը կատարելու օրվա դրությամբ փաստացի աշխատած ղեկավար անձանց:

2. Խրախուսման ֆոնդից պարգևատրման բաշխումն իրականացնել համապատասխան պաշտոնատար անձանց անհատական իրավական ակտերի

համաձայն՝ բաշխելով վերոնշյալ որոշումների իմաստով ղեկավար պաշտոն չզբաղեցնող անձնակազմի միջև:

3. Խրախուսման ֆոնդի չօգտագործված մասը բաշխել աշխատակիցներին՝ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ընդունած անհատական իրավական ակտերի համաձայն:

4. Սահմանել, որ սույն որոշմամբ հատկացված միջոցների հաշվին պարգևատրումներն իրականացվում են 2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ ամսական պարբերականությամբ՝ 4 հավասարաչափ վճարումներով:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի մարտի 31
ք. Եղեգնաձոր